ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵՀԵՆԴԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Վեց տասնամյակ է անցել այն օրերից, երբ Հոկտեմբերյան հողմերը ցնցեցին աշխարհը և ավետեցին մարդկության զարգացման որակապես նոր աստիճանի՝ կոմունիստական հասարակարգի ծնունդը։

Պատմության մեջ հեղափոխություններ շատ են եղել, նրանք շատ են եղել նաև մեր դարում, բայց մարդկության զարգացման ընթացքի վրա ունեցած ազդեցության խորությամբ ու մասշտաբներով Հոկտեմբերյան հեղափոխությունն իրեն հավասարը չի ունեցել, քանի որ, հիրավի «Հոկտեմբերի հաղթանակը 20-րդ դարի գլխավոր իրադարձությունն է, որն արմատապես փոխեց ամբողջ մարդկության զարգացման ընթացքը»[1]։

Հոկտեմբերյան հեղափոխությամբ սկսվեց մարդկային կյանքի բոլոր կողմերի՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական ու հոգևոր կյանքի արմատական վերափոխումը, որի հոյակապ արդյունքները դրսևորվել են մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ սովետական ժողովրդի կազմավորման ու զարգացման մեջ։

Ժողովուրդ հասկացությունը բազմաբովանդակ է, քանի որ այն նշանակում է, նախ, մարդկանց սոցիալ-էթնիկական հանրույթ (հայ ժողովուրդ, այսինքն՝ հայ ազգություն), այնուհետև՝ սոցիալական մեծ խմբավորում (աշխատավոր ժողովուրդ, այսինքն՝ աշխատավոր դասակարգերի ու խավերի հավաքականություն) և, վերջապես, մարդկանց տարածքային-պետական հավաքականություն (ֆրանսիական ժողովուրդ, այսինքն՝ ֆրանսիական պետության տարածքում ապրող և ֆրանսիական քաղաքացիություն ունեցող բնակչություն)։

Առաջին հայացքից նշված իմաստները կարծես թե իրարից շատ են տարբեր, բայց եթե հարցին մոտենանք պատմականորեն ու դիալեկտիկորեն, ապա կտեսնենք, որ դրանք ոչ միայն իրար հետ սերտորեն առնչվող սոցիալական խմբավորումներ են, այլև, ըստ էության, ծագումնային անմիջական կապ ունեցող երևույթներ։ Բանն այն է, որ արդեն իսկ նախնադարյան հասարակարգում տոհմացեղային, այսինքն՝ սոցիալ-էթնիկական ընդհանրությունը միաժամանակ և՛ աշխատավորների, և՛ տվյալ արեալի բնակչության հավաքականությունն էր, մեկ ընդհանուր ժողովուրդ էր։ Հետագայում, տոհմացեղային կապերի քայքայման պրոցեսում ձևավորված մարդկանց նոր պատմական ընդհանրությունը սկզբնապես հանդես է եկել որպես տվյալ տարածքում (պետության սահմաններում) ապրող սոցիալական տարբեր խմբերի ու-

---

1 «ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թվականի հունվարի 31-ի որոշումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին», Երևան, 1977, էջ 3։

էթնիկական տարրերի հավաքականություն։ Հիշենք, թեկուզ ուրարտական ժողովրդին, որի մեջ ըստ սեպագրերի հաղորդման քսանից ավելի էթնիկական խմբեր էին միավորված, ընդ որում՝ ներքին դասակարգային շերտավորմամբ։ Ստրկատիրության և ֆեոդալիզմի ժամանակաշրջանում տնտեսական կյանքի զարգացման հիմքի վրա սոցիալ-էթնիկական և նույնիսկ ռասայական տարբեր տարրերը, որոնք պետության սահմանների մեջ են մտել հիմնականում նվաճման հետևանքով, աստիճանաբար ձուլվել են մեկ միասնական ազգության մեջ՝ նվաճող էթնիկական խմբի որոշ հատկանիշների գերակշռությամբ։

Կապիտալիզմի սաղմերի կազմավորման հետ միասին սկսվում է ազգերի կազմավորումը՝ կամ մեկ ազգության հետագա զարգացման հիման վրա, կամ մի շարք ազգությունների, հետագայում նույնիսկ ազգերի հատվածների միախառնման միջոցով (ինչպես ԱՄՆ-ում)։ Այդ շրջանում հանդես են գալիս ազգային պետությունները, որոնց բնակչությունը հիմնականում համընկնում է մեկ ազգության հետ։ Միաժամանակ, կապիտալիզմին բնորոշ են նաև բազմազգ պետությունները, որոնց մի մասը ֆեոդալիզմից կապիտալիզմին ավելի ուշ անցնող միասնական տարածքով պետություններ են (ցարական Ռուսաստան, Թուրքիա), իսկ մյուսները գաղութատեր պետություններ են, ուր իշխող ազգն ապրում է մետրոպոլիայում, իսկ ենթակա ազգերն ու ազգությունները նրանից տարածքով անջատված են։

Ելնելով մասնավոր սեփականատիրական կարգերի, մասնավորապես կապիտալիզմի սոցիալ-քաղաքական և տնտեսական հատկանիշներից, այդ ֆորմացիաների ժողովուրդներին կարելի է բնութագրել որպես երկրների (պետությունների) բնակչության հավաքականություն, բայց ոչ միասնություն, քանի որ նրանք բաժանված էին քաղաքականապես ու տնտեսապես հակադիր դասակարգերի, բզկտվում էին ներքին դասակարգային պայքարից, կազմված էին, որպես կանոն, սոցիալ-էթնիկական տարբեր խմբերից, որոնք բռնությամբ էին պահվում պետության շրջանակներում, սահմանափակ իրավունքներ ունեին և պայքարում էին սոցիալական ու ազգային ազատագրության համար։ Ժողովրդի տարբեր հատվածների զարգացման մակարդակն անհավասարաչափ էր։

Այսպիսին էր մասնավորապես ցարական Ռուսաստանի ժողովուրդը, որը հեծում էր մի բուռ կապիտալիստների ու կալվածատերերի դաժան լծի տակ, տառապում տնտեսական անապահովությունից։ Նրա կազմի մեջ զգալի մաս կազմող ռուս ազգության հետ միասին համարյա ամբողջությամբ մտնում էին մի քանի տասնյակ ազգեր ու ազգություններ, ինչպես և Ռուսաստանի տարածքից դուրս ապրող մի քանի տասնյակ ազգությունների փոքր ու մեծ հատվածներ, որոնք զուրկ էին ազգային պետականությունից, պաշտոնապես սահմանափակված էին տնտեսական կյանքում, հատկապես ազգային հոգևոր մշակույթի ու կրթության զարգացման մեջ։ Այդ ազգությունների լեզուները ստորադասված էին որպես երկրորդական և ոչ միայն չէին կարող կիրառվել պաշտոնական հարաբերություններում, այլև նույնիսկ զգալի չափով նաև կրթության գործում։ Սոցիալ-քաղաքական, տնտեսական, հոգևոր և ազգային նույնպիսի անհավասարություններով, այս կամ այն յուրահատկությամբ այսօր բնութագրվում են կապիտալիստական բոլոր երկրների ժողովուրդները։

Ժողովրդի, այսինքն՝ ըստ էության ամբողջ մարդկության, այդ ներքին

հակամարտությունը, նրա տարբեր սոցիալական ու ազգային հատվածների կյանքի պայմանների խիստ տարբերությունը, դրանց թշնամությունն ու հակադրությունը, ինչպես ապացուցեցին Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը, անհնար էր հաղթահարել մասնավոր սեփականատիրության պայմաններում, դրա համար անհրաժեշտ էր վերացնել արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, հաստատել հասարակության ամենաառաջավոր ուժի՝ բանվոր դասակարգի դիկտատուրա, որի միջոցով կարելի էր հաղթահարել մարդկանց սոցիալ-դասակարգային և դրանից բխող մյուս սոցիալական հակադրությունները, այդ թվում և ազգերի ու ժողովուրդների հակադրությունն ու թշնամությունը։

Հասարակության կյանքում այդպիսի արմատական հեղաշրջման համար իրական պայմաններ ստեղծվեցին XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին, երբ հասունացավ ու կազմակերպվեց հեղաշրջումն իրականացնելու ընդունակ սոցիալական ուժը՝ արդյունաբերական բանվորների դասակարգը, երբ մարդկության մեծագույն հանճարներ Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը և Վ. Ի. Լենինը մշակեցին ու խորացրին հասարակության սոցիալիստական վերափոխման մասին գիտությունը և այն կապեցին բանվորական շարժման հետ, ստեղծեցին բանվոր դասակարգի ազատագրական պայքարը ղեկավարող քաղաքական հզոր կազմակերպությունը՝ կոմունիստների կուսակցությունը։

XX դ. սկզբում համաշխարհային զարգացման ընթացքն այնպես դասավորվեց, որ մասնավոր սեփականատիրական կարգերի հակասությունների սրման կիզակետ դարձավ ցարական Ռուսաստանը՝ աշխարհի ամենամեծ երկիրը, ուր առանձնապես ցայտուն դրսևորվեց սոցիալական ու ազգային հակամարտությունը։ Վ. Ի. Լենինի և նրա կազմակերպած կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Ռուսաստանի բազմազգ բանվոր դասակարգը հերոսական պայքար ծավալեց և դաշնակցելով չքավոր գյուղացիության հետ, 1917 թ. հոկտեմբերին տապալեց մասնավոր սեփականատիրական կարգերը և երկրում հաստատեց պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա։

Համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ պետական իշխանության գլուխ կանգնեցին աշխատավոր դասակարգերը՝ ժողովրդի հիմնական զանգվածը։ Բանվորների ու գյուղացիների ներկայացուցիչների սովետների ձևով կազմակերպված նրանց իշխանությունը դարձավ այն անպարտելի սոցիալ-քաղաքական ուժը, որը Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ իրականացրեց սոցիալիզմի կառուցումն ու հասարակական բոլոր հարաբերությունների արմատական վերափոխումը։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո անցած վեց տասնամյակների ընթացքում մեր երկրում կատարված վերափոխությունների հոյակապ արդյունքները լայնորեն հայտնի են ամբողջ աշխարհին և վճռականորեն ազդում են ամբողջ համաշխարհային զարգացման վրա։ Ընդ որում, մեր երկրի սոցիալիստական վերափոխման փորձը, որն այսօր լրացվում է նրա անմիջական ազդեցությամբ ու օգնությամբ աշխարհի տարածքի մեկ քառորդն ու բնակչության մեկ երրորդն ընդգրկող սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ընդհանուր փորձով, հնարավորություն է տալիս հստակորեն պատկերացնելու ժողովրդի և, որոշակի իմաստով, մարդկության՝ որպես երկրա-

գնդի բնակչության հավաքականության, հետագա զարգացման ուղիները և նրա նոր բնութագիրը։

Ահա այս իսկ առումով փորձենք քննարկել, թե մեր երկրի 60-ամյա սոցիալիստական զարգացումն ինչպես դրսևորվեց ժողովրդի, որպես նրա բնակչության հավաքականության, ընդհանուր բնութագրի վրա։

Սոցիալիզմի կառուցումն ու նրա այսօրվա հասուն վիճակը հանգեցրին ժողովրդի ներքին հակամարտության, նրա բոլոր հատվածների սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր (կուլտուրական), ազգային անհավասարության հաղթահարմանը և նրան վերածեցին զարգացման միատեսակ բարձր մակարդակի վրա կանգնած, կյանքի բոլոր բնագավառներում լիակատար հավասար, միասնական գաղափարախոսություն ու աշխարհայացք, բարոյաքաղաքական ըմբռնումներ ունեցող, համերաշխությամբ ու բարեկամությամբ զոդված մարդկանց միասնության։

Սովետական ժողովուրդը դրսևորվում է նոր, ներդաշնակ՝ բարեկամության ու համագործակցության հարաբերություններով ոչ միայն դասակարգերի ու սոցիալական խմբերի միջև, այլև ազգերի ու ազգությունների միջև։ Ահա այս իսկ առումով նա ոչ միայն մարդկանց սոցիալ-դասակարգային, այլև ինտերնացիոնալ ընդհանրություն է։ Դա մարդկանց միանգամայն նոր պատմական ընդհանրություն է, որը հայտնի չի եղել և չէր էլ կարող հայտնի լինել մարդկության զարգացման նախասոցիալիստական շրջանին։

Փորձենք համառոտակի վերլուծել սովետական ժողովրդի կազմավորման ու զարգացման պատմական փուլերը և բնորոշ կողմերը։

Ինչպես արդեն նշեցինք, մինչսոցիալիստական ֆորմացիաներում ժողովուրդը պառակտված էր հակադիր դասակարգերի և սոցիալական խմբերի։ Այդ պառակտման հիմքը արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը և շահագործման ու ենթարկման արտադրական հարաբերություններն էին։ Սովետական իշխանության հաղթանակից հետո այդ հարաբերությունները տապալվեցին, սակայն նրանց վերջնական հաղթահարումը պահանջեց որոշակի ժամանակաշրջան՝ մոտ երկու տասնամյակ։

Բանն այն էր, որ սոցիալիստական՝ համագործակցության ու փոխադարձ օգնության արտադրական հարաբերությունների լիակատար հաղթանակի համար անհրաժեշտ էր տնտեսական կյանքի բոլոր կողմերի արմատական վերափոխում, նոր առաջացած սոցիալիստական կացութաձևի հետ միասին այս կամ այն չափով պահպանվող հին կացութաձևերի, մասնավորապես կապիտալիզմի ու մանր ապրանքային տնտեսատիրության մնացորդների վերջնական հաղթահարում։ Այդ ինդիրը դժվարանում էր նրանով, որ առաջին համաշխարհային պատերազմի և մոտ 5 տարի տևած քաղաքացիական պատերազմի ու օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի հետևանքով ժողովրդական տնտեսությունը խիստ քայքայված էր։ Դրա համար էլ Հոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդած առաջին տասնամյակը քայքայված տնտեսության վերականգնման շրջան էր և միաժամանակ երկրի ներսում կապիտալիստական ու սոցիալիստական տնտեսաձևերի մրցության շրջան։ Այդ շրջանի վերջում՝ 1928 թ. երկրի ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիստական տնտեսության տեսակարար կշիռը հիմնական արտադրական ֆոնդերում հասավ 35,1, ազգային եկամտում՝ 44,0, արդյունաբերության համախառն

արտադրանքում՝ 82,4, գյուղատնտեսության համախառն արտադրանքում՝ 3,3%-ի[2]։

Այս հիմքի վրա պահպանվում էր հասարակության սոցիալական բազմասեռությունը։ Այսպես, նույն 1928 թ. երկրի բնակչության սոցիալական կազմը հետևյալ պատկերն ուներ. բանվորներ և ծառայողներ՝ 17,2, կոլտնտեսային գյուղացիություն և կոոպերացված տնայնագործներ՝ 2,9, մենատնտես գյուղացիներ և չկոոպերացված տնայնագործներ՝ 74,9, բուրժուազիա, կալվածատերեր, առևտրականներ ու կուլակներ՝ 4,6%[3]։ Բնական է, որ երկրի կյանքում դեռևս սուր դասակարգային պայքար էր մղվում, որը սրվում էր այն ժամանակ պահպանվող կապիտալիստական շրջապատի ուղղակի և անուղղակի ազդեցությամբ։

Հաջորդ տասնամյակի ընթացքում սովետական պետությունը կոմունիստական կուսակցության մշակած սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի համաձայն իրականացրեց երկրի լայն ինդուստրացում, գյուղատնտեսության մեջ մանրապրանքային արտադրության վերացում և նրա փոխադրում կոոպերատիվ-կոլտնտեսային, այսինքն՝ սոցիալիստական տնտեսաձևի։ Այդ քաղաքականությունը աշխատավոր ամենալայն զանգվածների բուռն աջակցության շնորհիվ պսակվեց լիակատար հաղթանակով, և արդեն 1939 թ. այսինքն՝ Հոկտեմբերի հաղթանակից 22 տարի հետո, մեր երկրի ժողովրդական տնտեսության մեջ գործնականորեն լիովին հաղթահարվեցին կապիտալիստական արտադրությունը, մանրապրանքային տնտեսությունը և մասնավոր առևտուրը։ Տնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը հասավ 99,99%-ի։

Տնտեսական կյանքում կատարված այս արմատական հեղաշրջումը դարձավ հասարակության սոցիալական կառուցվածքի հետագա փոփոխության և դասակարգերի ու սոցիալական խմբերի բուն էության արմատական վերափոխման հիմք։

Սոցիալական կառուցվածքի մեջ ճնշող գերակշռություն ստացան աշխատավոր դասակարգերն ու խավերը և 1939 թ. սոցիալիստական արտադրության մեջ աշխատող բանվորներն ու ծառայողները կազմեցին արդեն բնակչության կեսից ավելին՝ 50,2%-ը, սոցիալիստական արտադրության հետ կապված կոլտնտեսային գյուղացիությունը և կոոպերացված տնայնագործները կազմեցին 47,2%։ Որպես դասակարգեր ու սոցիալական խմբեր լիովին վերացվեցին բուրժուազիան, կուլակությունը և մասնավոր առևտրականները, ոչ լիակատար սոցիալիստական տնտեսաձև ներկայացնող խմբերի՝ մենատնտես գյուղացիների ու չկոոպերացված տնայնագործների տեսակարար կշիռը 1928 թ. 74,9%-ից 1939 թ. նվազեց և հասավ ընդամենը 2,6%-ի[4]։

Այսպիսով, տնտեսության սոցիալիստական եղանակի լիակատար հաղթանակի շնորհիվ արդեն իսկ 1939 թ. սովետական ժողովուրդը վերածվեց սոցիալապես միասեռ՝ աշխատավորական դասակարգերից ու խմբերից կազմված հավասարության։

---

2 «Народное хозяйство СССР в 1965 г.», М., 1966, стр. 63.

3 Նույն տեղում, էջ 42։

4 Նույն տեղում։

Մյուս կողմից, քաղաքական ու տնտեսական արմատական փոփոխությունների հետևանքով հիմնովին փոխվեց հասարակության հիմնական դասակարգերի՝ բանվորների և գյուղացիների սոցիալական բնույթը։ Նախկինում արտադրության միջոցներից զուրկ և մասնավոր սեփականատերերի մոտ վարձու աշխատող պրոլետարիատը վերափոխվեց ու դարձավ արտադրության միջոցների համաժողովրդական սեփականության մասնակից և իր իսկ պետության ձեռքում գտնվող, ժողովրդի կենսական շահերին ծառայող արտադրության աղատ աշխատող, ճնշված վիճակից բարձրացավ հասարակության մեջ տիրապետող վիճակի։ Նույնքան հիմնական էր նաև գյուղացիական դասակարգի էության մեջ կատարված փոփոխությունը։ Նախկին խիստ շերտավորված, չքավորների, միջակների ու կուլակների բաժանված, մանրապրանքային արտադրության հետ կապված դասակարգը վերափոխվեց արտադրության միջոցների սոցիալիստական կոլեկտիվ սեփականատեր ու կոլեկտիվ արտադրող դասակարգի։

Դրա հետ միասին անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն վիթխարի փոփոխությունները, որոնք այդ ժամանակաշրջանում կատարվեցին բանվորների ու գյուղացիների կենսամակարդակում, կենցաղում և կուլտուրական զարգացման բնագավառում։ Այսպես, օրինակ, հեղափոխությունից առաջ Ռուսաստանի բնակչության ճնշող մեծամասնությունն անգրագետ էր, 1926 թ. գրագետ էր բնակչության 56,6%-ը, իսկ 1939 թ.՝ արդեն 87,4%-ը, այսինքն՝ բանվորների և գյուղացիների ճնշող մեծամասնությունը[5]։ Միաժամանակ զգալիորեն բարձրացավ նաև ժողովրդի կրթական մակարդակը. այսպես, եթե 1913 թ. աշխատող բնակչության մեջ բարձրագույն և միջնակարգ մասնագիտություն ունեցողների թիվը 190 հազար էր, ապա 1941 թ. հունվարին այդ թիվը հասավ 2401 հազարի, այսինքն՝ աճեց ավելի քան 12 անգամ[6]։

Սոցիալական կառուցվածքի բնագավառում կարևոր փոփոխություն էր մտավոր աշխատանքով զբաղված սոցիալական միջնախավի՝ մտավորականության կյանքում կատարված փոփոխությունը։ Բանն այն է, որ անցյալից նոր հասարակարգին անցած մտավորականության որակյալ մասը հիմնականում շահագործող դասակարգերի ծնունդ էր և իր ապրելակերպով բուրժուա էր։ Բնականաբար, նրա մի զգալի մասը հանդես եկավ սովետական իշխանության դեմ կամ արտագաղթեց երկրից։ Դրա համար էլ սովետական իշխանությունը հնարավորություն տվեց բանվորական և գյուղական ծագում ունեցող երիտասարդներին, հաճախ արտոնյալ պայմաններով, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու։ Հենց նրանք էլ դարձան նոր, ժողովրդական մտավորականության կորիզը։

Ժողովրդի սոցիալական կառուցվածքի մեջ կատարված այս արմատական փոփոխությունների իրականացումն ընթացավ լարված դասակարգային պայքարի պայմաններում, ինչպես ժամանակին կանխատեսել էր Վ. Ի. Լենինը, խոսելով պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանի դասակարգային պայքարի հինգ առանձնահատուկ ձևերի մասին[7]։ Իսկապես, տապալված շահագործող դասակարգերի դիմադրության հաղթահարման և քաղաքացիական

---

5 «Народное образование, наука и культура в СССР», М., 1971, стр. 21.

6 «Народное хозяйство СССР. 1922—1972 гг.», М., 1972, стр. 853.

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 97—111։

պատերազմի ընթացքում ոչնչացվեց կամ երկրից հեռացավ շահագործող դասակարգի առավել ծայրահեղ ու կատաղի մասը. մանր բուրժուազիայի չեզոքացման պրոցեսում գյուղացիության աշխատավոր զանգվածներն անցան սոցիալիստական տնտեսաձևի կողմը, իսկ նրա շահագործողական հատվածը՝ կուլակությունը, վերացվեց որպես դասակարգ. բուրժուական մասնագետների խելացի օգտագործումը նրանց զգալի մասին վերածեց սոցիալիզմի կողմնակիցների և նրանց օգնությամբ կրթվեց նոր մտավորականությունը. վերջապես, աշխատանքային նոր կարգապահության համար մղվող պայքարը բանվորների ճնշող մասին ազատագրեց անցյալի հոգեբանությունից, նրանց մեջ պատվաստեց սոցիալիստական վերաբերմունք աշխատանքի և համաժողովրդական ունեցվածքի՝ սոցիալիստական սեփականության նկատմամբ։

Շահագործող դասակարգերի և նրանց մնացորդների վերացումից հետո ավելի լայն պայմաններ ստեղծվեցին սոցիալիստական դեմոկրատիայի ծավալման համար, որ նշանավորվեց ՍՍՀՄ 1936 թ. սահմանադրության ընդունումով, ուր արտացոլվեցին երկրի տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքում կատարված արմատական վերափոխումները։

Ահա այս բոլորը հիմք է տալիս պնդելու, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից երկու տասնամյակ հետո մեր ժողովուրդը դարձավ աշխատավորական միասեռ դասակարգերից ու խավերից կազմված ամբողջություն, իր մեծամասնության մեջ սոցիալիստական գիտակցություն ունեցող ու միասնական շահերով միավորված նոր ընդհանրություն, որն այդ ժամանակներից սկսած կոչվեց սովետական ժողովուրդ։

Սովետական ժողովրդի ներսում տեղի ունեցավ սկզբունքային նոր հարաբերությունների հաստատում նաև սոցիալ-էթնիկական հանրույթների՝ ազգերի ու ազգությունների միջև։

Ազգային հարաբերությունների հարցը ընդհանուր-սոցիալական հարցի մի յուրահատուկ դրսևորում է, ուր սոցիալական ճնշումն արտահայտվում է ազգային երևույթների՝ լեզվի, հոգեբանության, կուլտուրայի զարգացման սահմանափակման, ազգային խտրականության ու հակադրության, նվաճված ազգերի տնտեսական ու սոցիալական զարգացման արհեստական կասեցման ձևով։ Ցարական Ռուսաստանը, ինչպես բազմիցս նշել է Վ. Ի. Լենինը, ժողովուրդների բանտ էր, ուր բազմաթիվ ազգեր ու ազգություններ գտնվում էին իրավական և փաստական՝ տնտեսական, քաղաքական և կուլտուրական անհավասարության պայմաններում։ Կապիտալիզմի պայմաններում այդ անհավասարությունն ու թշնամությունը վերացնել հնարավոր չէր, դրա համար, ինչպես մարքսիզմ-լենինիզմի կլասիկներն են նշել, անհրաժեշտ է հաստատել սոցիալիզմ, քանի որ ազգային հարցը ընդհանուր սոցիալական ազատագրության հարցին ենթակա հարց է։ Այդ իսկ հիմքից ելնելով, Վ. Ի. Լենինը մշակեց ազգային հարաբերությունների վերափոխման հիմնական սկզբունքները սոցիալիստական հեղափոխությունից հետո. ազգերի ինքնորոշման, ընդհուպ մինչև անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքի անվերապահ ճանաչում, ազգային արտոնությունների և սահմանափակումների վերացում, ազգային կյանքի, լեզուների ու կուլտուրաների զարգացում և բոլոր ազգերի ու ազգությունների աշխատավորների համախմբում միասնական քաղաքական, արտադրական և հասարակական կազմակերպություններում։ Այս սկզբունքներն ազգերի հակադրման ու բռնի

ձուլման քաղաքականությանը, որ բնորոշ էր կապիտալիզմին, հակադրում էին ազգերի ծաղկման և մերձեցման քաղաքականությունը, որը սոցիալիզմի օրոք նրանց զարգացման տենդենցների հանճարեղ կանխատեսումն էր։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով սկսված սոցիալական վերափոխման անքակտելի մասը դարձավ նաև ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառումը, ազգային հարաբերությունների սոցիալիստական վերափոխումը, ազգերի փաստական հավասարության հաստատումը։

Այդ պրոցեսն սկսվեց բուն Հոկտեմբերյան հեղափոխության ու հետագայում սովետական իշխանության ամրապնդման համար մղված պայքարում ազգերի ու ազգությունների առաջադիմական ուժերի հեղափոխական դաշինքի ստեղծումով, Հոկտեմբերյան հեղափոխությամբ ազատագրված ազգերի աշխատավորների համախմբումով ռուս բանվոր դասակարգի շուրջը, մի համախմբում, որն այնուհետև վերածվեց սովետական կարգեր հաստատած ազգերի ռազմաքաղաքական դաշինքի։ Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո, 1922 թ. սովետական այդ ազգային հանրապետությունները կամավոր միավորվեցին մի պետական ամբողջության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ, որը Վ. Ի. Լենինը դիտում էր որպես ազգերի ու ազգությունների ապագա համաշխարհային միավորման նախատիպ։ Առաջին անգամ համաշխարհային պատմության մեջ ազգերի բռնի միավորումը փոխարինվեց նրանց կամավոր միավորումով և դա շատ արագ տվեց իր հոյակապ արդյունքները։

Ազգային հավասարության հաստատումն սկսվեց նրանց պետական-քաղաքական ինքնորոշման իրականացումով։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անցած երկու տասնամյակներում ՍՍՀՄ կազմում իրենց հիմնական զանգվածով ապրող բոլոր փոքր ու մեծ ազգերն ու ազգությունները ստացան սոցիալիստական ազգային պետականություն՝ միութենական և ինքնավար սովետական հանրապետությունների, ազգային ինքնավար մարզերի ու շրջանների ձևով։ Ազգային ինքնավարություն ստացան նաև հիմնական զանգվածով այլ երկրներում ապրող որոշ ազգերի ՍՍՀՄ-ի տարածքում բնակվող հատվածները։ Այսպիսով ավելի քան 5 տասնյակ ազգեր ու ազգություններ սոցիալիստական հիմքի վրա վերականգնեցին իրենց կորցրած պետականությունը կամ պատմության մեջ առաջին անգամ ձեռք բերեցին այն։ Դա ազգերի իրավական լիակատար հավասարության հաստատումն էր, որը սոցիալական նոր հարաբերությունների պայմաններում հզոր գործիք դարձավ նրանց փաստական՝ տնտեսական ու կուլտուրական անհավասարության հաղթահարման համար։

Բանն այն է, որ ցարական Ռուսաստանին միացված ազգությունները ապրում էին հիմնականում նրա ծայրամասերում և սոցիալապես ու տնտեսապես ավելի ցածր մակարդակի վրա էին գտնվում։ Նույնիսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նրանք սեփական ուժերով ի վիճակի չէին ապահովելու ո՛չ իրենց անկախությունը, ո՛չ էլ, առավել ևս, տնտեսական ու կուլտուրական հետամնացության հաղթահարումը։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այդ հարցում հանդես եկավ պատմականորեն բոլորովին նոր գործոն՝ ազատագրված ռուս ժողովուրդը, որը դարձավ ոչ միայն բոլոր ազգությունների աշխատավորներին կապող օղակը, այլև նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացմանն օժանդակող հզոր ուժը։ Այսպես, ավելի

զարգացած ու սոցիալիզմի ոգով վերափոխված ռուս և ուկրաինացի ժողովուրդների անմիջական օգնությամբ ազգային ծայրամասերում խթանվեց արդյունաբերության զարգացումը, աճեցվեցին արտադրության ու կուլտուրայի ազգային կադրեր, ծավալվեց կրթություն՝ սկզբում ռուսաց, ապա և տեղական ազգային լեզուներով, 40-ից ավելի ազգություններ, որոնք գիր ու գրականություն չունեին, ստեղծեցին ազգային այբուբեններ, կրթության, արվեստի ու գիտության ազգային օջախներ։

Սոցիալիզմի կառուցման պրոցեսում ազգերի նոր փոխհարաբերությունների համար բնորոշ էր մի աննախընթաց երևույթ ևս՝ դա ետ մնացած ազգերի ու ազգությունների տնտեսական ու կուլտուրական զարգացման ավելի բարձր տեմպերն էին, որոնք նրանց հնարավորություն տվեցին երկու տասնամյակում մոտենալու զարգացածների մակարդակին։

Ազգային տնտեսական ու հոգևոր կյանքի բուռն ծաղկումը, ազգերի միջև համագործակցության և փոխադարձ օգնության հարաբերությունների հաստատումը, ազգերի պետական-քաղաքական համերաշխությունը, նրանց բոլորի հոգևոր աշխարհում սոցիալիստական գիտակցության ամրապնդումը ամուր հող ստեղծեցին ազգային հակադրության ու թշնամության վերացման և ժողովուրդների իսկական բարեկամության հաստատման համար, որը դարձավ սովետական ժողովրդի զարգացման շարժիչ ուժերից մեկը։

Այսպիսով, սովետական ժողովուրդը միասնականացավ նաև սոցիալ-էթնիկական հանրույթների՝ ազգերի, ազգությունների և ազգային խմբերի հավասարությամբ, զարգացումով և անշեղ մերձեցումով։ Այն վերածվեց ոչ միայն սոցիալ-դասակարգային, այլև ինտերնացիոնալ միասնության։

Սոցիալիզմի հիմքերի կառուցումից հետո սովետական ժողովուրդը հնարավորություն ստացավ մի նոր վիթխարի թռիչք կատարելու՝ անցնելու արդեն իր իսկ ստեղծած տնտեսական, քաղաքական ու սոցիալական հիմքի վրա զարգացող հասուն սոցիալիստական հասարակության կառուցմանը, սակայն այդ պրոցեսը ժամանակավորապես կասեցվեց 1941 թ. մեր երկրի վրա միջազգային իմպերիալիզմի հարվածային ջոկատի՝ գերմանական ֆաշիզմի ուխտադրուժ հարձակումով։ Սկսվեց սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը մեր երկիրը ներխուժած ֆաշիստական հորդաների դեմ, որը տևեց համարյա ամբողջ չորս տարի, խլեց 20 միլիոն սովետական մարդկանց կյանք, հանգեցրեց վիթխարի ավերումների։ Բայց սոցիալիզմի գաղափարներով տոգորված սովետական ժողովուրդը Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ոչ միայն հերոսաբար դիմադրեց, այլև հաղթեց ու ոչնչացրեց ֆաշիզմը նրա իսկ որջում։ Պատերազմը հանդիսացավ մեր երկրի սոցիալիստական կարգերի ամրության, սովետական ժողովրդի միասնության անհերքելի ապացույցը, անհամեմատ մեծացրեց նրանց միջազգային հեղինակությունը և ազդեցությունը համաշխարհային ամբողջ զարգացման վրա։

Սովետական ժողովրդի հաղթանակը Հայրենական մեծ պատերազմում հանգեցրեց միջազգային իրադրության լուրջ փոփոխության։ Եվրոպայի, Ասիայի և հետագայում Ամերիկայի տասից ավելի երկրներում հաստատվեցին սոցիալիստական կարգեր, ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, որը ընդգրկեց Երկրագնդի տարածքի մեկ քառորդը և բնակչության մեկ երրորդը՝ ավելի քան մեկ միլիարդ մարդ։ Սոցիալիզմը ստեղծեց

երկրների ու ժողովուրդների համագործակցության միջազգային կուռ սիստեմ և դարձավ աշխարհում խաղաղության պահպանման, հակադիր սոցիալական սիստեմների խաղաղ գոյակցության, գաղութային լծից հարյուրավոր ժողովուրդների ազատագրման ու ինքնուրույն պետականության հաստատման վճռական ուժը։ Դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին մեր երկրում և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի մի շարք երկրներում սոցիալիստական հասարակարգի հետագա զարգացման և դեպի կոմունիզմ մի նոր զգալի առաջքայլ կատարելու համար։

Սովետական ժողովուրդը հերոսական ջանքերով շատ արագ, ընդամենը 5—6 տարում կարողացավ հիմնականում հաղթահարել պատերազմի ծանր հետևանքները և կատարել մի նոր վիթխարի թռիչք, որը բնութագրվում է սովետական ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներում հսկայական առաջընթացով և նրա սոցիալ-դասակարգային ու ինտերնացիոնալ միասնության հետագա խորացմամբ։

Նախ, դա արտահայտվեց աննախընթաց առաջընթացով տնտեսության բնագավառում։ Այսպես, եթե 1917 թ. համեմատությամբ մեր երկրի ազգային եկամուտը 1940 թ. աճել էր 8,2 անգամ, իսկ համախառն հասարակական արտադրանքը 7,8 անգամ, ապա 1977 թ., ազգային եկամուտը, 1917 թ. համեմատությամբ կավելանա արդեն 103, իսկ համախառն հասարակական արտադրանքը 96 անգամ։ Ընդ որում, առանձնապես բարձր տեմպերով աճեց արդյունաբերական արտադրանքը։ Եթե 1940 թ. այն 1917 թ. համեմատությամբ աճել էր 12 անգամ, ապա 1977 թ. այն կավելանա 225 անգամ[8]։

Հետպատերազմյան ժամանակաշրջանը բնութագրվեց կապիտալիզմի հետ սոցիալիզմի մրցության որակապես նոր արդյունքներով։ Մասնավորապես արդյունաբերական արտադրության արտակարգ բարձր տեմպերի շնորհիվ անշեղորեն մեծացավ ՍՍՀՄ և սոցիալիզմի սիստեմի տեսակարար կշիռը համաշխարհային արտադրության մեջ։ Այսպես, եթե 1917 թ. ՍՍՀՄ արդյունաբերական արտադրանքը կազմում էր համաշխարհայինի սոսկ 3%-ը (իսկ 1922 թ., քաղաքացիական պատերազմի վերջում, նույնիսկ 1%-ը), ապա 1937 թ. այն հասավ 10, իսկ 1975 թ.՝ 20%-ի, այսինքն՝ 1975 թ. ՍՍՀՄ-ը արդեն տալիս էր համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մեկ հինգերորդը։ Այնուհետև, եթե սոցիալիզմի երկրները 1950 թ. տալիս էին համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մոտ 20%-ը, ապա 1975 թ. նրանց արտադրանքը կազմեց համաշխարհայինի ավելի քան 40%-ը[9]։

Հատկանշական է, որ արդյունաբերական արտադրանքի մի շարք կարևորագույն տեսակների՝ պողպատի, նավթի, չուգունի, տրակտորների, ցեմենտի, քիմիական պարարտանյութերի, բամբակյա գործվածքների, կաշվե կոշկեղենի, շաքարի, կաթի, կենդանական յուղի և այլն արտադրությամբ ՍՍՀՄ-ը 1976 թ. դուրս եկավ աշխարհում առաջին տեղը։ Ընդ որում բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող նավթի, պողպատի, ցեմենտի, բամբակյա գործվածքների, կաշվե կոշկեղենի, կենդանական յուղի և կաթի քանակով ՍՍՀՄ-ը գերազանցեց կապիտալիստական ամենաղարգացած երկրին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներին[10]։ Հատկանշական է նաև, որ արդյունաբերական ար-

---

8 «Правда», 5.IX.1977.

9 «Народное хозяйство СССР в 1975 г.», М., 1976, стр. 118.

10 «Правда», 5.IX.1977.

տարրանքի աճը 1951—1975 թթ. ՍՍՀՄ-ում կազմել է 6,9%, իսկ ԱՄՆ-ում՝ 2,4%, արդյունաբերական աշխատանքի արտադրողականության աճը կազմել է համապատասխանաբար 6,2 և 3,2%։ Զարգացման այսպիսի բարձր տեմպերը լուրջ նախադրյալ են համաշխարհային արտադրության մեջ ՍՍՀՄ տնտեսակարար կշռի հետագա զգալի մեծացման համար։

Տնտեսական զարգացման այսպիսի վիթխարի թռիչքը լայն հնարավորություններ ստեղծեց սովետական ժողովրդի կենսամակարդակի և հոգևոր կյանքի հետագա բուռն զարգացման համար։

Այսպես, ՍՍՀՄ բնակչության մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը 1950 թ. համեմատությամբ 1975 թ. աճեց համարյա 5 անգամ, բանվորների ու ծառայողների միջին աշխատավարձը 1965 թ. 129 ռուբլուց 1975 թ. հասավ 198 ռուբլու։ Ընդ որում, աշխատավարձի մեջ հասարակական ընդհանուր ֆոնդերից ստացվող հասույթները 39 ռուբլուց հասան 62 ռուբլու[11]։ Իսկ դա նշանակում է, որ զգալիորեն ավելացան սովետական պետության հատկացումները ժողովրդի կրթության, առողջության պահպանման ու բուժման, հանգստի կազմակերպման, կենսաթոշակների ու բազմազավակ ընտանիքներին տրվող լրացուցիչ նպաստների համար։ Դրա հոյակապ արդյունքն էր այն, որ սովետական մարդկանց կյանքի միջին տևողությունը 1913 թ. 32 տարվա դիմաց 1976 թ. հասավ 70 տարվա, այսինքն՝ ընդհուպ մոտեցավ համաշխարհային ամենաբարձր մակարդակին։

Կրթության բոլոր ձևերի արտակարգ բուռն զարգացման հետևանքով զգալիորեն բարձրացավ ամբողջ ժողովրդի կրթական-կուլտուրական զարգացման աստիճանը։ Այսպես, 1976 թ. բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մասնագետների քանակը հասավ 24 միլիոն մարդու՝ 10 անգամ գերազանցելով 1940 թ. մակարդակը, իսկ բարձրագույն և միջնակարգ (լրիվ և թերի) կրթություն ունեցողների քանակը 1977 թ. հասավ 126,1 միլիոն մարդու[12]։ Հասարակական արտադրության առաջընթացի և գիտատեխնիկական հեղափոխության ընձեռած հնարավորությունները, գիտության նոր նվաճումները ժողովրդի, անհատների համակողմանի զարգացման ի սպաս դնելը նպաստեց քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունների հետագա նվազմանը։ 1977 թ. ՍՍՀՄ քաղաքային բնակչությունը կազմեց 62%՝ 160,8 միլիոն մարդ, իսկ գյուղական բնակչությունը՝ 98,1 միլիոն մարդ[13], ընդ որում, և՛ կենսամակարդակի, և՛ տեխնիկական արդի միջոցների օգտագործման, և՛ կուլտուրական զարգացման տեսակետից ՍՍՀՄ այսօրվա քաղաքային և գյուղական բնակչությունը շատ քիչ են տարբերվում իրարից։

Այս բոլորի հետևանքով լուրջ փոփոխություններ կատարվեցին սովետական ժողովրդի սոցիալական կառուցվածքում. հետպատերազմյան շրջանում բնակչության մեջ զգալիորեն աճեց արդյունաբերական բանվորների և սոցիալիստական մտավորականության տեսակարար կշիռը։ Այսպես, ՍՍՀՄ-ում բանվորների ու ծառայողների տարեկան միջին քանակը 1913 թ. 12,9 միլիոն մարդուց 1977 թ. հասավ 106,2 միլիոնի։ Ընդ որում, այդ թվում բանվորների

---

11 «Народное хозяйство СССР в 1975 г.», стр. 122, 545.

12 «Правда», 5.IX.1977.

13 Նույն տեղում։

քանակը 11 միլիոնից հասավ 74 միլիոնի, իսկ մտավոր աշխատանքով զբաղվողների քանակը 1926 թ. 3 միլիոնից 1977 թ. հասավ 37,5 միլիոնի[14]։

Սովետական ժողովրդի հոգևոր կերպարի հետագա զարգացման կարևոր ցուցանիշ է, մասնավորապես, Հոկտեմբերյան հեղափոխությամբ կյանքի կոչված լայն մասսաների սոցիալական ակտիվության, հասարակության կառավարմանը նրանց մասնակցության աստիճանի բուռն աճը։ Այսօր սովետական ժողովրդի ամենաակտիվ, ամենաառաջավոր մասը՝ ավելի քան մեկ և կես տասնյակ միլիոն մարդ համախմբված է ՍՄԿԿ շարքերում, տասնյակ միլիոնավոր երիտասարդներ միավորված են լենինյան կոմերիտմիության մեջ, գործնականորեն բոլոր աշխատավորները միավորված են արհմիութենական կազմակերպություններում։ Բացի այդ, ավելի քան երկու միլիոն սովետական քաղաքացիներ ժողովրդական դեպուտատների սովետների ընտրյալ անդամներ են, իսկ մի քանի տասնյակ միլիոն մարդ ուղղակի կամ անուղղակի, հասարակական կարգով մասնակցում են սովետների բազմապիսի հանձնաժողովների գործունեությանը։

Հասարակական գործերին կամավոր ու ակտիվ մասնակցելը, հոգատարությունը հասարակության ընդհանուր գործերի համար սովետական ժողովրդի հոգևոր կերպարին բնորոշ գծերից մեկն է։ Դրա փայլուն դրսևորումներն էին վերջին տարիներին ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հնգամյա պլանի առաջադրանքների քննարկումը, որին մասնակցեցին միլիոնավոր մարդիկ՝ անելով ավելի քան մեկ միլիոն առաջարկություն և, մասնավորապես, ՍՍՀՄ նոր սահմանադրության նախագծի քննարկումը, որի ժամանակ աշխատավորները հանդես եկան միլիոնավոր առաջարկություններով։ Դրանք հասարակական ընդհանուր գործերի կառավարմանը սովետական ժողովրդի ամենալայն մասնակցության, սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ընդլայնման վկայությունն են։

Սովետական ժողովուրդն այսօր էլ դեռ ստորաբաժանված է դասակարգերի ու սոցիալական խավերի, բայց դրանք արդեն որակապես նոր դասակարգեր են՝ միասեռ աշխատավորական դասակարգեր ու խավեր, որոնց միջև սահմաններն ավելի ու ավելի են ջնջվում։ Այսօր հաճախ դժվար է իրարից սահմանազատել բանվորին, գյուղացուն, ծառայողին, մտավորականին, քանի որ նրանք բոլորն էլ սոցիալիստական աշխատավորներ են, ունեն հոգևոր զարգացման մոտավորապես նույն բարձր մակարդակը, նույն կենցաղը, նույն ապրելակերպը։ Ամենևին էլ պատահական չէ, որ ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ աշխատավորների դեպուտատների սովետներ արտահայտությունը փոխարինվել է ժողովրդական սովետներ արտահայտությամբ. դա սովետական ժողովրդի սոցիալ-դասակարգային միասնության օրենսդրական վավերագրումն է։

Այսպիսով, կարելի է պնդել, որ անցումը զարգացած սոցիալիստական հասարակության է՛լ ավելի է մերձեցնում դասակարգերին ու սոցիալական խավերին, ավելի է խորացնում սովետական ժողովրդի սոցիալական միասեռությունը։

Միաժամանակ զարգացած սոցիալիստական հասարակության մեջ խորանում է սովետական ժողովրդի ինտերնացիոնալ միասնությունը։ Շարու-

14 Նույն տեղում։

նակելով սոցիալիզմի կառուցման պրոցեսում ազգերի իրավական, քաղաքական, տնտեսական ու կուլտուրական հավասարության, ազգերի միջև նոր՝ բարեկամության և համագործակցության հարաբերությունների հաստատման բնագավառում արգեն իսկ ձեռք բերված նվաճումները, զարգացած սոցիալիստական հասարակությունը պայմաններ է ստեղծում ազգերի ու ազգությունների սոցիալական, տնտեսական ու կուլտուրական զարգացման մակարդակների հետագա համահարթման համար, որն ապահովում է ազգերի բուռն ծաղկումը և անշեղ մերձեցումը։ Հենց այդ նպատակով զարգացած սոցիալիզմի ժամանակ ապահովվում են ազգերի ու ազգությունների կյանքի այս կամ այն կողմի՝ ոմանց մոտ արդյունաբերության, մյուսների մոտ՝ կուլտուրայի առանձին բնագավառների զարգացման ավելի բարձր տեմպեր, քան Միության մեջ ամբողջությամբ։ Այսպես, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության 10-րդ հնգամյա պլանով նախատեսված է ամբողջ երկրում արդյունաբերական արտադրանքի աճի 36%, իսկ Կիրգիզիայում՝ 37, Ադրբեջանում և Տաջիկստանում՝ 39, Ղազախստանում՝ 40, Վրաստանում՝ 41, Բելոռուսիայում՝ 43, Հայաստանում՝ 46, Մոլդավիայում՝ 47%։ Ահա մի այլ փաստ. 1940-ից մինչև 1975 թ. ՍՍՀՄ-ում բանվորների ընդհանուր քանակն աճել է երեք անգամ, իսկ Տաջիկստանում մոտ 5, Կիրգիզիայում՝ 6, Հայաստանում՝ 7,5, Մոլդավիայում՝ 16 անգամ[15]։ Այս փաստերը վկայում են սովետական հանրապետությունների զարգացման մակարդակների հետագա համահարթման մասին՝ տնտեսական ու սոցիալական բնագավառներում։

Կուլտուրայի զարգացման և կրթության բնագավառներում մակարդակների համահարթման տեսակետից բնորոշ են հետևյալ փաստերը. 1941—1975 թթ. ՍՍՀՄ-ում բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցողների քանակն աճել է 9 անգամ, իսկ Հայաստանում՝ 11, Թուրքմենիայում և Ուզբեկստանում՝ 14, Տաջիկստանում՝ 16, Մոլդավիայում՝ 17, Կիրգիզիայում՝ 19, Ղազախստանում՝ 20 անգամ[16]։ Բնակչության 10 000 հոգուն ընկնող բժիշկների թիվը 1940 թ. համեմատությամբ 1975 թ. ամբողջ ՍՍՀՄ-ում աճել է 4,1 անգամ, իսկ Ուզբեկստանում՝ 5,5, Մոլդավիայում՝ 6,2, Ղազախստանում՝ 6,4, Կիրգիզիայում՝ 6,6 անգամ։ Ընդ որում, միութենական հանրապետությունների մեջ 1975 թ. ամենացածր մակարդակը՝ 10000 հոգուն 20,6 բժիշկ (Տաջիկստան), մի քանի անգամ բարձր է, քան Իրանում (3,9), Թուրքիայում (6,1), բարձր է քան Անգլիայում (15,7), Ֆրանսիայում (17,5) և ընդհուպ մոտեցել է ԱՄՆ-ի (21,0) և ԳՖՀ-ի (21,8) մակարդակներին[17]։ Վերջապես, այդ տեսակետից բնորոշ է նաև բնակչության 10000 հոգուն ընկնող ուսանողների թիվը. 1940 թ. համեմատությամբ 1975 թ. այն ՍՍՀՄ-ում ավելացել է 4,6 անգամ, իսկ Ուզբեկստանում՝ 6, Բելոռուսիայում՝ 7, Կիրգիզիայում՝ 7,6, Լիտվայում՝ 9, Ղազախստանում՝ 9,4, Տաջիկստանում՝ 9,9, Մոլդավիայում՝ 11,5 անգամ։ Ընդ որում, միութենական հանրապետությունների մեջ 1975 թ. ամենացածր մակարդակը՝ 10000 հոգուն 115 ուսանող (Մոլդավիայում), մի քանի անգամ բարձր է, քան ոչ միայն Իրանում (37), Թուրքիայում (49), այլև ԳՖՀ-ում (67), Անգլիայում (88) և մոտենում է Իտալիայի մակարդակին (120), իսկ միու-

15 «Народное хозяйство СССР в 1975 г.», стр. 539.

16 Նույն տեղում, էջ 554։

17 Նույն տեղում, էջ 157։

թենական ամենաբարձր մակարդակները՝ 212 (ՌՍՖՍՀ) և 191 (Հայաստան)— գերազանցում են բոլոր զարգացած երկրների մակարդակները, բացի ԱՄՆ-ից[18]։

Սովետական հանրապետությունների զարգացման այսօրվա բարձր մակարդակի բնորոշ օրինակ է Սովետական Հայաստանը, որը 60 տարի առաջ համարյա թե չուներ արդյունաբերություն, ուր ժողովրդի երեք քառորդն անգրագետ էր, չկար բարձրագույն կրթության ոչ մի օջախ։ Այժմ Սովետական Հայաստանը, ինչպես և մյուս բոլոր սովետական հանրապետությունները, արդյունաբերական և կուլտուրական զարգացման մակարդակով հասել է աշխարհի ամենազարգացած երկրների մակարդակին։ Այսօր Սովետական Հայաստանը զարգացած արդյունաբերության ու կուլտուրայի երկիր է՝ այնտեղ արտադրվում են ժամանակակից ամենաբազմազան մեքենաներ ու սարքեր։ Նրա արդյունաբերական արտադրանքի 180 տեսակներ արտահանվում են արտասահմանյան ավելի քան 70 երկրներ։ Բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող մետաղահատ հաստոցների, հաշվողական տեխնիկայի, էլեկտրոնային սարքավորումների, ճշգրիտ չափիչ սարքերի, բամբակյա գործվածքների, կաշվե կոշկեղենի քանակով Հայաստանը հասել է ամենազարգացած երկրների մակարդակին։ Նույն պատկերն է նաև կուլտուրայի բնագավառում. բնակչության 10000 հոգուն ընկնող ուսանողների, գիտական աշխատողների, բժիշկների, հրատարակված գրքերի, ամսագրերի ու թերթերի քանակով Սովետական Հայաստանն այսօր մոտեցել է աշխարհի ամենաբարձր ցուցանիշներ ունեցող երկրներին։

Այսպիսով, ակնհայտ է, որ զարգացած սոցիալիզմի պայմաններում ժողովրդի սոցիալական միասնության հետագա ամրապնդումն անշեղորեն ուղեկցվում է նաև նրա սոցիալ-էթնիկական խմբերի՝ ազգերի ու ազգությունների զարգացման մակարդակների համահարթումով, նրանց փաստական հավասարության հետագա խորացումով։

Ինչպես ՍՍՀՄ սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկման արդյունքների մասին ՍՍՀՄ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջանում նշեց Լ. Ի. Բրեժնևը, որոշ ընկերներ, որոնց թիվը շատ քիչ է, ազգերի ու ազգությունների անշեղ մերձեցումից եզրակացնում են, թե իբր մեր երկրում ազգերն ու ազգություններն արդեն ձուլվել են մեկ միասնական սովետական ազգի մեջ և դրա հիման վրա առաջարկում են վերացնել միութենական հանրապետությունների սուվերենությունը, զրկել նրանց ՍՍՀՄ-ից դուրս գալու իրավունքից, արտաքին հարաբերությունների իրավունքից, վերացնել Գերագույն սովետի ազգությունների պալատը։ Նշելով նման առաջարկությունների սխալականությունը, Լ. Ի. Բրեժնևը որոշակիորեն հայտարարեց, որ «Սովետական ժողովրդի սոցիալ-քաղաքական միասնությունը ամենևին չի նշանակում ազգային տարբերությունների անհետացում։ Լենինյան ազգային քաղաքականության հետևողական կիրառման շնորհիվ մենք, կառուցելով սոցիալիզմ, միաժամանակ,— պատմության մեջ առաջին անգամ,— հաջողությամբ լուծեցինք ազգային հարցը։ Անխախտ է սովետական ժողովուրդների բարեկամությունը, կոմունիստական շինարարության պրոցեսում անշեղորեն տեղի է ունենում նրանց մերձեցում, նրանց հոգևոր կյանքի փոխադարձ հարստացում։ Բայց մենք վտանգավոր ուղու վրա կկանգնեինք,

18 Նույն տեղում, էջ 682, 155։

լեթև սկսեինք արհեստականորեն արագացնել ազգերի մերձեցման այդ օբյեկտիվ պրոցեսը։ Դրանից հաստատակամորեն զգուշացնում էր Վ. Ի. Լենինը, և նրա պատգամներից մենք չենք նահանջի»[19]։

Սովետական ժողովրդի աննախընթաց հաջողությունների, նրա հետագա բուռն առաջընթացի հաստատուն երաշխիքը նրա ավանգարդի՝ ՍՄԿԿ, լենինյան քաղաքականությունն է, որի նպատակը սովետական ժողովրդի կյանքի հետագա բարելավումն է, նրա կյանքի բոլոր կողմերի բուռն զարգացումը, աշխարհի ժողովուրդների միջև խաղաղ համագործակցության հաստատումն ու կոմունիստական հասարակարգի կառուցումն է։

Սովետական ժողովուրդը հանդիսանում է մարդկանց վիթխարի հավաքականություն (այսօր ՍՍՀՄ-ում ապրում է 259 միլիոն մարդ), որը մարդկանց պատմական ընդհանրության մի նոր աստիճան է, այնպիսի ընդհանրություն, որը աշխարհին տալիս է մարդկանց սոցիալական ու սոցիալ-էթնիկական խմբերի համերաշխության ու բարեկամության, համագործակցության ու եղբայրական փոխադարձ օգնության, հաշտ ու խաղաղ ստեղծագործ կյանքի փայլուն օրինակ։ Դրա համար էլ վստահորեն կարելի է ասել, որ սովետական ժողովուրդը մարդկության ապագա արդարացի սոցիալական կազմակերպության նախատիպն է։

Սովետական ժողովրդի բոլոր նոր հատկանիշները դրսևորվել են հասարակության անդամների, անհատների հոգևոր կերպարի մեջ։ Դրա համար էլ, ինչպես ՍՄԿԿ XXV համագումարում իրավացիորեն նշեց ընկեր Լ. Ի. Բրեժնևը, «...անցած 60-ամյակի կարևորագույն արդյունքն է սովետական մարդը։ Մարդ, որը կարողացավ ազատությունը նվաճելուց հետո այն պաշտպանել ամենածանր մարտերում։ Մարդ, որը կառուցեց ապագան, չխնայելով ուժերը և դիմելով ամեն մի զոհաբերության։ Մարդ, որն անցնելով բոլոր փորձությունների միջով, ինքն էլ փոխվեց անճանաչելիորեն, իր մեջ միացնելով գաղափարական համոզվածությունն ու հսկայական կենսական եռանդը, կուլտուրան, գիտելիքները և դրանք կիրառելու կարողությունը։ Դա մի այնպիսի մարդ է, որը լինելով ջերմագին հայրենասեր, եղել է և միշտ կլինի հետևողական ինտերնացիոնալիստ»[20]։ Ահա այսպիսի նոր մարդկանց միասնություն է սովետական ժողովուրդը։

СОВЕТСКИЙ НАРОД КАК НОВАЯ ИСТОРИЧЕСКАЯ ОБЩНОСТЬ ЛЮДЕЙ

МЕГЕНДАК МЕЛИКЯН

Резюме

После Великой Октябрьской социалистической революции в жизни народа нашей страны произошли коренные политические, социально-экономические и духовные изменения, вследствие чего сформировалось новое качество общности людей — советский народ, являющийся единст-

---

19 «Սովետական Հայաստան», 5. X. 1977։

20 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1976, էջ 144։

вом однородных трудовых классов и социальных групп и фактически равных, развивающихся и сближающихся наций и народностей. Советский народ ныне является общностью, характеризующейся гармоничными отношениями не только между классами и социальными группами, но и между социалистическими нациями и народностями, спаянными нерушимой дружбой. В формировании и развитии советского народа решающую роль сыграли Коммунистическая партия и советское государство.